ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

ի պատասխան Ձեր 22.08.2025թ. հ. 198-2025թ. գրության՝ հայտնում եմ.

Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում հերթագրված երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է www.mankapartez.yerevan.am էլ.կայքում:

Մանկապարտեզներում երեխաների ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատություններ սաների ընդունելության կարգը սահմանելու մասին» հ.76-Ն հրամանի դրույթներին համապատասխան՝ յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2025-2026 ուսումնական տարվա ընդունված երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր է ներկայացնել սեպտեմբերի 8-ից հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ